

ՄԵՐ ՉԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ *)

Այժմ դասնանք այն խնդրին թէ Վահան Մամիկոնեանի երկու կանանցից որին է Սամուէլն սպանել, և ո՞րն է Սամուէլի հարազատ մայրը, Արմզղուխար թէ Տաճատուհին:

Երկու աղբիւրներից և ոչ մինի վրայ առանձին հիմք չունենք, գոնեա այս խնդրի վերաբերութեամբ, կասկածելու: Եթէ Խորենացին այժմ ժամանակով ուշ է համարում, Բուզանդարանն էլ վէպ: Եւ որովհետեւ այս խնդրի մասին տարաբախտաբար էլ ուրիշ աղբիւր չունենք, ուստի ուշի ուշով քննենք. թերեւ այս տեղ էլ կարելի լինի հակասութիւնները հաշտեցնել և խնդրի վրայ սակաւ ինչ լոյս սփռել:

Բուզանդը և Խորենացին իսկապէս ասած քուն այն խնդրի վերաբերութեամբ ըստ էութեան չեն տարբերում, չեն հակասում միմեանց: Երկուսն էլ միևնոյն են համարում պատճառը, որով Սամուէլն սպանեց իւր հայր Վահանին և իւր մօրը. միայն թէ Բուզանդը Սամուէլի մօրն անուանում է Արմզղուխտ, իսկ Խորենացին՝ Տաճատուրհի: Բուզանդարանը թէև ուղղակի չի յայտնուով թէ ինչու Սամուէլն սպանեց իւր հայր Վահանին և իւր Արմզղուխտ մօրը, սակայն պատմութեան ընթացքից երևում է միևնոյն կրօնական պատճառը, ինչ որ Խորենացին յատկապէս շեշտում է: Բուզանդը նախ պատմում է Վահանի և Մեհրութանի ուրացութիւնը, Արշակի Անյուշ բերդում փակուելը¹, Զիկի և Կարէնի ձեռքով Հայոց աշխարհի դիսաւոր քաղաքների բնակիչների գերութիւնը Խուժաստան և Փառանձեմի

*) Տես Արարատ սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 765—789:

1. Բուզ. Դ, ծ-ծդ, 163—174:

խայտատակ մահը¹, ապա ինչպէս Շապուհը Վահանի և Մեհրուժանի առաջնորդութեամբ Հայոց երկիրն է առաջատակում և զարկիբ խայտատակութիւններ կատարում ազատ կանանու զլխինու Շապուհի հետանալուց յետոյ այդ երկու ասնօրէն» հայ իշխանները զգլխում են շարիքները սահանջելով «Թողնել աստուած պաշտութիւնը և Մազդեզանց կրօնին դառնալ»։ հակառակողներին «չարամահ սպանում էին», և Վահանը նոյն իսկ իւր «քոյրաթիւ» Համազասպունու շինուայեց. «Ատրուշաններ էին շինում շատ տեղերում . . . և իրենց որդիքն ու ազգայինները ապրիս էին մազդեզանց ուսման» և այնուհետև ահա Բուզանդարանը յարում է. «Ապա Վահանի մի որդին, անունը Սամուէլը, դարկեց սպանեց իւր Վահան հօրը և Արմզդուխա մօրը, որ Պարսից թագաւորի քոյրն էր, և ինքը փախտատական եղաւ խաղղեաց երկիրը»²։

Արմզդուխան ի հարկէ Արծրունի Տաճատուրհու պէս շէր կարող ուրացող համարուել, քանի որ իբրև պարսկուհի արդէն մազդեզական-զրադաշտական էր, որոնց դէմ էր բորբոքուած հայութիւնը. ուստի և Սամուէլը շէր ինուայել ի հարկէ և սորան սպանելու։ Այս կարելի էր ենթադրել և այն հանգամանքից, որ Սամուէլը Բուզանդարանում այնուհետև Պատի և Վարադդաաթի, ինչպէս և Մանուէլի իշխանութեան սկզբում, երբ Մանուէլն ևս աակաւին Պարսից կողմն էր³, շէ յիշուում, բայց յետոյ, երբ սա Յունաց կողմն անցաւ, Սամուէլն արդէն մասնակցում է Բաղրևանդի կտուին⁴։ Իսկ Խորենացին Սամուէլի անունը ապրիս է էլ աւելի ուշ, Արշակ Գ.—ի, որի կուսակիցն էր Սամուէլը, և Խոսրով Գ.—ի մամանակ⁵։ Հենց այս հանգամանքը, այլ և այն, որ Իւզգաւոն կամսարականը, Ար-

1. Բուզ. Գ, ծե, 174—179.

2. Բուզ. Գ, ծբ—ծթ, 181—184.

3. Անդ. Ե, լէ, 251. լբ, 252—255. Հմմտ. մեր յօդուածը, Արարատ Ամս. 1913, էջ 247.

4. Բուզ. Ե. իդ, 262—263.

5. Խորեն. Գ. իսե, 235—236.

շաւրի թօսը, և Դարա Սիւնին, Բարիկի օրդին¹ — օրոնց տանք Ներսէի գէժ մղած պատերազմի սրատնտաւ Շապուհը կոտորեց² — Արշակ Գ-ի կողմն են, աւելի ոյժ են տալիս մեր այս ենթադրութեան. մանաւանդ որ այս երկուսը Սահակ ասպետի և այլ նախարարների պէս Յունահայաստանից չվերադարձան Պարսկահայաստան Սասրով Գ-ի մօտ³, չնայելով որ իրենց կալուածքները Պարսկահայաստանում էին և Շապուհը մինչև իսկ ներման հրովարտակ էր ասուել⁴ :

Ապա չնայելով որ նոյն իսկ Գաղաւթնը Արշակի մահից յետոյ⁵ Սասրովին թողնով պայմաններ է առաջարկում Յունահայաստանի հայ նախարարների հետ միասին և դրական պատասխան ստանալով վերադառնում են Պարսկահայաստան. յետոյ Սամուէլը Սասրովի թուղթը և նախարարների թղթերի պատճէնները բռնելով գնաց Արկադ կայսեր մօտ և օրովհետև, յարում է Սորենացին, նա սպանել էր իւր հայր Վահանին՝ ուրացութեան համար, և իւր մայր Տաճատուրհուն, երկուդ կրելով Պարսիկներից և իւր քեռիներից՝ արծրունիներից, շէր իշխում Յոյներից դատուել⁶ :

Արդ եթէ Սամուէլը՝ չնայելով Շապուհի ներման և Սասրով Գ.-ի խոստման հրովարտակներին դեռ յամառում է և շէ վերադառնում Պարսկահայաստան, դժուար միայն իւր հաւատարաց ճնողներին՝ Վահանին և Տաճատուրհուն սպանելու համար լինէր. և երբ բելոր նախարարները վերադառնում են, իսկ նա գնում է Արկադ կայսեր մօտ, վախենալով ոչ միայն Արծրունիներից, այլ նախ և առաջ Պարսիկներից, պէտք է որ նա մի աւելի ծանր յանցանք

1. Անդ, Գ. խդ, 236 — 237.

2. Բուդ, Գ. ձր, 182. Գ. իա, 55. Ե. իր, 257. Հմմտ. Ս. Օրբէլեան Ը, 19 — 24, Մոսկովա 1861.

3. Սորեն. Գ. խդ, 233 — 234.

4. Անդ, Գ. խբ, 231 — 233.

5. Անդ, Գ. խդ, 236 — 237.

6. Սորեն. Գ. իր, 238 — 240.

գործած լինէր Պարսից զէմ, քան միւս նախարարները: Հասկանալի է որ նա իւր քեռի Արծրունիներից վախենար, քանի որ սպանուած Տաճատուրհին այդ ցեղից էր. իսկ Պարսիկներից ինչո՞ւ պիտի վախենար, և այն էլ Շապուհի և Սուրով Գ.—ի հրովարտականներից յետոյ, եթէ Շապուհի քոյր Արմզգուխաին իւր հօր հետ միասին սպանուած չլինէր: Աւստի անտարակոյս է, որ Սամուէլը սաշանել է ոչ միայն Տաճատուրհուն, որ վկայուած է Խորենացին, այլ և անշուշտ և Արմզգուխաին, որ շեշտուած է Բուզանդարանը:

Պորենացու և Բուզանդի տարբերութեանց վրայ շատերն են գլուխ ջարդել. և եթէ հենց մեր պատմագրութեան սկզբից երկար դարեր շարունակ Պորենացուն են հաւատացել, իսկ վերջերս, արդէն մեր ժամանակ՝ Բուզանդին, մեր կարծիքով կնճիտն այդպիսով շի լուծուել: Պորենացու իսկական պատմագրի յատուկ քննադատական հայեացքները և ձևերը նորան միայն պատիւ են բերում իւր ժամանակի համար, և սխալ ժամանակարանութիւնը դեռ փատճառ չէ նորա պատմագրութեան ընդհանրապէս և մասնաւորապէս որոշ անցքերի վրայ տարակուսելու և կամ կասկածելու: Եթէ ժողովրդական վէպը, ինչպէս այս գէպքում Բուզանդարանն է, իւր գլխաւորապէս ժամանակարանական սխալների հետ պահում է ճշգրիտ պատմական անցքեր և յուշիկներ, ինչպէս որ հաւատում ենք, միթէ նոյնը պէտք է մերժել մի պատմագրի, որքան էլ որ ս^ա ժամանակակից շհամարուի և թէկուզ որոշ միտումներ ունենայ, ինչպէս Խորենացին:

Յատկապէս մեր այս խնդրին գալով՝ պիտի տեսնք շար են Պորենացու զէմ եղած յարձակումները: Մենք կարծում ենք այս խնդիրն ըստ էութեան լուծուելի: Տարբերութիւնը միայն այն է, որ Բուզանդարանն ասում է թէ Սամուէլը փախաւ «Պախղեսաց երկիրը», իսկ Պորենացին՝ թէ գնաց «Արկադ կայսեր մօտ»: Եւ միակ սխալն այստեղ այն է, որ թէոզոս կայսեր փոխարէն Արկադն է (395 — 408) յիշուած, մինչդեռ մեր Սուրով Գ.—ը գահից զրկուել է 391 թուականին, ինչպէս դիտում է և

Գարագաշեանը¹. քայց Պոսրովն այդ երկու կայսրներին էլ ժամանակակից էր, ուստի նոցա անունների շփոթումը մեզ իրաւունք չէ տալիս Թորենացուն այնչափ մեղադրել, մանաւանդ թէ դէպքը կասկածելի համարել:

Աչաղիք ընթերցողը կը տեսնի, որ մեր այս երկու հեղինակների պատմածը եւկառ տարբեր անցքեր են իրարից մտահաս քսան տարի հետու և ոչ թէ միևնոյն Բուզանդարանի հաղորդածը, Սամուէլի «Խաղաղեաց երկիրը» փախստական լինելը պատահել է ոչ թէ Արշակ Գ.—ի և Պոսրով Գ.—ի ժամանակ, այլ սոցա երկու նախորդներից Վարազդատից և Պապից էլ առաջ և Արշակ Բ.—ի Անյուշ բերդում բանդարկուելուց յետոյ, ուրեմն 367—368 թուականներին: Մամիկոնեաններից ուրիշներն էլ շատ յետոյ՝ Հմայեակ ս. Վարդանի եղբայրը² և Վահան Մեծը ապրստամբութեան միջոցին³ ապաստան էին փնտրում իրենց կալուածք Տայոց աշխարհի մտակ «Խաղաղեաց երկրում» և կամ սահմանակից լեռներում, ուր «ամուր տեղեր» կային. հենց թամուէլի ժամանակ Պապը՝ ըստ Ամմիանոսի⁴, եւ ինչպէս վերջիններս ի հարկին դուրս էին գալիս այդ ամրոցներից թշնամուն դիմադրելու, այնպէս էլ Սամուէլը, թերևս հենց Պապի հետ, մանաւանդ որ Սամուէլը Յոյների դրած Պապ և Վարազդատ թագաւորներից և Մանուէլի Յոյների կողմն անցնելուց յետոյ միայն մասնակցում է Բագրևանդի ճակատամարտին, ինչպէս յիշուած է: Այնուհետև տեղի է ունենում Մանուէլի մահը և Հայաստանի բաժանումը Արշակ Գ.—ի և Պոսրով Գ.—ի ժամանակ 384—386-ին, որով և վերջանում է Բուզանդի պատմութեան թելը⁵. այն ինչ Թորենացին շարունակում է, որ

1. Քննակ. Պատմ. Հայոց, Գ. մասն, Բ, § 9, էջ 198—202, Թիֆլիս 1895:

2. Եղիշէ, Ե. էջ 196—200, Թէոդոսիա 1861. Հմմտ. Ղ. Փարպ. Բ, խա, էջ 74:

3. Ղ. Փարպ. Պատմ. Գ, հթ, էջ 145. Թիֆլիս 1904:

4. Յ. վ. Գաթրընեան, Տիեզեր. Պատմ. Բ, հատոր 2, ք, § 125, էջ 502. Վիեննա 1852:

5. Բուզ. 2, ա, 269—271:

«Շապուհի բաժնի» հայ «նախարարութիւններ կանանցով
և որդիներով» գնում են Արշակի հետ Հայաստանի Յու-
նաց բաժինը. բայց Շապուհի նոցա ուղղուած ներման
հրովարտակից յետոյ վերադառնում են մեծ մասը¹, բացի
Արշակի երեք «աննդակիցներից» և սոցա յարած շորս
այլ նախարարներից². Եւ երբ երեք այլ նախարարներ
Արշակի գանձերը Հանի ամրոցից յափշտակելով «կամե-
նում են անցնել Պարսկի մօտ», հանդէս է գալիս Պարե-
նացու մէջ ահա առաջին անգամ «Սամուէլ Մամիկոնեան
Արշակի մտերիմը», որ յարմարեան գնդով հետապնդում է
գանձը յափշտակողներին, սակայն իզուր³. Այս պատճա-
ռով պատերազմ է ծագում երևել գաշտում Արշակի և Պար-
սկի միջև և առաջինի մահից յետոյ⁴. Գազաւոնը մնացեալ
նախարարների հետ միասին թուղթ զրելով Պարսկին՝ և
պայմանները կատարելու խոստման հրովանասակն ստա-
նալով՝ վերադառնում են, ինչպէս գիտենք, բացի Սամուէ-
լից, որ այս թղթերը ձեռք ձգելով՝ գնաց կայսեր մօր.
Արդ, այս անցքը կարող էր տեղի ունենալ 388 թուակա-
նից ոչ վաղ, Թէոդոս Ա. կայսեր ժամանակ, ուրեմն շուրջ
քսան տարի Սամուէլի Պարզեաց երկիրը փախչելուց
յետոյ:

Այժմ էլ ուշք դարձնենք մեր հեղինակների լեզուի
վրայ. ուստի և մէջ բերենք գրարատ բնագրերը, որոնցից
ևս կերևայ, որ այս մասենագիրները գիտեն թէ ինչ են
ասում: Բուզանդարանն ասում է. «Ապա որդի մի Վահա-
նայ, անուն Սամուէլ, նոր սատակեաց զՎահան գհայր
իւր, և զՍրմիզդուխա գմայր իւր՝ զքոյր Շապուհ Պարսից
Թազաւորին, և ինքն փախստական լինէր յերկիրն Խաղ-
ղեաց». իսկ Խորենացին. «Բայց Սամուէլ Մամիկոնեանի
յինքն ըմբռնեալ զթուղթն Խորսովու և գպատճէն թղթոյ
նախարարացն. գատուցեալ ի նոցանէ՝ գնաց առ կայսրն

1. Պոլեն. Գ, խբ, 231—233.

2. Անդ. Գ, խդ, 233—234.

3. Պարեն. Գ, խե, 235—236.

4. Անդ. Գ, խդ, 236—237.

Արկադի Քանդի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան [Վահան] յաղագս ուրացութեանն, և զմայր իւր Տաճատուրհի, երկնչելով ի Պարսից և ի քեռեաց իւրոց արժրու- նեաց, ոչ իշխւոյ զատշել ի Յունաց։ Բուզանդարանի վկայութեան սկզբում ընդգծուած երկու բայերը կատարեալ ժամանակին, իսկ վերջինը այսպէս կոչուած պատմական անկատար, որ յատուկ է մեր դասական գրաբարին փոխանակ կատարեալի¹, մանաւանդ երբ երկու երեք իրար յաջորդող կատարեալից յետոյ է տրուած², ինչպէս այստեղ, և ի հարկէ կատարեալի միտք ունի. և ուրեմն սպանութիւնը և փախուստը խաղտիք միաժամանակին կատարուած։

Մինչդեռ այլ բան է ասում Խորենացին։ Այստեղ թղթերը ձեռք ծռելն ու կայսեր մօտ դնալն է միաժամանակ կատարուած, ուստի և կատարեալ ժամանակում է «զնաց» բայը, այն ինչ «էր սպանեալ» գերակատար ժամանակը զոչ է տալիս որ սպանութիւն շատ աւելի վաղ էր կատարուել, քան թղթերի գրաւումը։ Ապա գիտեցէք «Քանդի»-ից առաջ գրուած խոշոր վերջակէտը, որով, ինչպէս յաջորդ բառերի մտքից էլ երևում է, այստեղ Խորենացին մի բոլորովին նոր բան է ասում, որ այլ ևս Սամուէլի կայսեր մօտ դնալուն չէ վերաբերում, այլ Պարսկահայաստան այլևս շփերադասնալուն, և ուրեմն «Քանդի»ն պէտք է ոչ թէ թարգմանել «որովհետեւ», այլ Սւ որովհետեւ նա սպանել էր իւր հայր Վահանին ուրացութեան համար, և իւր մայր Տաճատուրհուն, ուստի՝ փախնալով իւր արժրունի քեռիներից, չէր իշխում զատուել Յոյներից։

Այժմ ուրեմն պարզ է որ այդ երկու հեղինակները ոչ միայն միմեանց չեն հակասում, այլ տարրեր անցքեր

1. Վրթ. Չալքիսեան, Քերական. Հայկագն. լեզուի, Բ, Ժ, 1, և, էջ 367. Վիեննա 1885.

2. Անդ. Բ, Ժ, 3, և, 2, էջ 383.

3. Խ. Ստեփանէ, Թարգմ. Խորեն. Գ, խը, 302. Ս. Պետերբ. 1889.

են յիշում. և Թորենացին գիտէ այդ երկուսն էլ և թէ և իւր պատմագրութեան մէջ Բուզանդարանի պատմած և աւելի առաջ կատարուած անցքը կապել է իւր անցքի հետ, սակայն «էր սպանեալ» ձևով ցոյց է տալիս, որ Վահանի սպանութիւնը շատ աւելի վաղ էր կատարուած, քան Սամուէլի կայսեր մօտ գնալը: Հենց այսպէս էլ հասկացել է և Թովմա Արծրունին¹:

Մեզ դեռ մնում է որոշելու թէ Վահանի երկու կանանցից ո՞րն է Սամուէլի հարազատ որը խորթ մայրը: Եթէ մէկը չէ կարող երկու մօր որդի լինել, բայց կարող էր կոչուել, ինչպէս որ ստբա էլ նորա մայր: Մենք տեսանք որ Թորենացու յիշած «Արմզդուխար» Մերուժանի կինն էր, իսկ Բուզանդարանի յիշած միւս «Արմիզդուխար» Վահանի, որի կինը սակայն ըստ Թորենացու արծրունի Տաճատուրհին էր. մի հանգամանք և անուն, որ Բուզանդարանում չենք տեսնում: Բայց եթէ կրկին ուշի ուշով քննենք Բուզանդարանը, կը տեսնենք որ հենց ստբա վկայութեամբ ևս Թորենացին արդարանում է:

Բուզանդարանը Շապուհի քոյր «Արմիզդուխար» Վահանի կին կոչելով հանդերձ գիտէ, որ Սամուէլը շատ նման է Մերուժանին: Բազրեանդայ Բազաւանի ճակատամարտում Մանուէլ սպարապետը և Բիրբիկ Սիւնին սպանում են Մերուժանին. և երբ Զարմանդուխտ տրվնոջ քանակը «Տանում էին իրանց հետ Մերուժանի գլուխը, և Վահանի որդի Սամուէլը Մանուէլի հետ շհանդիպեց, որովհետև դարձաւ [միւս] քանակը: Սակայն երբոր Մանուէլի քանակի կանայք տեսան Մերուժանի գլուխը, մեծ աղաղակով ճիշ էին բարձրացնում, որովհետև նոքա այնպէս նամարեցին թէ այն գլուխը Վահանի որդի Սամուէլինն է. վասն զի երկուսը, Մերուժանն ու Սամուէլը միմեանց նման էին: Ապա տեսան Մերուժանայ գլուխը, որ երկար ցցունք էր կախուած, այն ժամանակ ճանաչեցին թէ Սամուէլինը չէ, այլ Մերուժան Արծրունունը»²:

1. Պատմ. Ա, Ժ, էջ 65. Ժա, էջ 68.

2. Բուզ. Ե, խդ, 262—263.


Չուղորդներ ի հարկէ նոյն իսկ հակասանեաներում են պատահում, ինչպէս Տրանսուալի կրիզեր նախադահինը Լանդոնում, սակայն այն աստիճանի նման, որ նոյն իսկ թէկուզ կարուած գլուխը երկար ու բարակ գիտելուց յետոյ միայն երկարացումներից հանաչուի, մի շատ մերձաւոր ազդակցական կտայ է ենթադրել տալիս, որ վերևում Մ. Խորենացին յայտնեց. Մերուժանը Սամուէլի քեռին էր: Այս իրողութիւնը չէ յիշում Բուզանդարանը, բայց իւր այս միջնադէպով միայն հաստատում է Խորենացու ասածը, որով կարծես արդարանում է բժշկականութեանն անյայտ, բայց հայ ժողովրդից ընդունուած ասածը. «Տղան քեռուն կը քցի»¹: Եւ որ աւելի հետաքրքրական է Արծրունեաց երկրի, Վասպուրականի սահմաններում և Մամիկոնեանց երկիր Տարօնում գրի առած Մասնայ ծանր կամ Չոջանց տան, Մամիկոնեանց և Արծրունեաց վէպում այդ ասածն աւելում է այսպէս. «Ասած են՝ զաղջիկն առ Եզդինանց, որ տղէն ևզնի քեռխատան»²: Բնագրի «Եզդինունց» մենք փոխեցինք «Եզդինունց» համարելով այդ անունը ծագած ժ՛հ. դարի վերջերին Վան-Տոսալայ նշա-

1. Մեր հարեան թուրքերն էլ ասում են «Աթ աթասընայ, սղուլ դայասընայ» — «Զին հօրը, տղան քեռուն»: Թուրքերէնի յանդատութիւնն ապացոյց է, որ հայերէնը թուրքերէնից փոխանուած պիտի լինի: Այս ասածի իսկական միտքը, թուում է ժողովրդի այժմ հասկացածը՝ նմանութիւնը չէ, այլ այն թէ ձին հաշոււմ է հօր կողմից և տղան մօր, ուստի այս ասածը մնացորդ պիտի լինի մայրիշխանութեան ժամանակի, երբ զաւակները մօրն էին պատկանում, սորա ազդանունը կրում և քեռին էր նրանց տէր ու պաշտպանը: Այս ասածի աստիճին մասը կայ ունի, կարծես, պարսկերէն հետևեալ ասածի հետ. «C'estaux chevaux écoulement qu'il fautdemander de la race et du sang» (Արուլ կասիմ Զերդուսի. publice par M-me Mohl, հատոր VII, էջ 369, Paris 1878):

2. Գար. Սրուանձաեան, Սասունցի Գաւթ կամ Մհերի Գուռ, է. էջ 21. Материалы Армянск. Нарѣчій, Мусскій Діалектъ, К. П. Паткановъ. С. Петерб. 1875: Այս ասածի միտքն է «Եզդինանց աղջիկ առ, որ տղան քեռներին նմանի»:


նաւոր ամիրայ Նզդին յազգէն Սենեքերիմեանց՝ 1: Չարմա-
նայի դու գաղիպութեամբ ուրեմն այդ առածը և այն էլ հայ
ժողովրդական վէպում աւոււմ է Արծրունեաց մասին, որոնց
աղջիկն էր Տաճատուրհին, և սորա որդին Սամուէլը. իսկ
Արծրունիք համարուում են Ասորեստանի Սենեքերիմ՝ թա-
գաւորի Ազրամելիքի և Սանասարի սերունդ թէ ըստ Չո-
չանց տան ժողովրդական վէպի և թէ ըստ Խորենացու
պատմագրութեան, որ անտարակոյս առաջինից է ծա-
գում²: Եթէ ուրեմն և Բուզանդարանից երևում է, որ
Մեհրուժանը Սամուէլի քեօին կարող էր լինել ըստ ամե-
նայն հաւանականութեան, ապա ուրեմն հենց իւր իսկ
վկայութեամբ Խորենացու Տաճատուրհին Մեհրուժանի
քոյրն է և Սամուէլի հարազատ մայրը. մինչդեռ Բուզան-
դարանի յիշած Նապուհի քոյր Արմիզդուխար ոչ թէ Սամ-
ուէլի հարազատ մայրն էր, ինչպէս սնդում է Գարագաշ-
եանը, այլ խորթ մայրը, մայրաթիւր, որ Բուզանդարանը
չէ շեշտում, այլ ըստ սովորականի մայր կոչում, գուցէ
և գործածական չէր այդ ինչպէս և եղբայրաթիւ բառը,
որ շնայելով առթին չէ գործածում: Ահա և նիւղազրու-
թիւնը

Մամիկոնեան Արաւագդ. Վաչէ Արծրունի



1. Թովմա Մեծորեցի, Պատմ. Հանկթամուրայ, էջ 30 և 60, Փարիզ 1860.
2. Որ Սենեքերիմեանք ասելով արծրունիք պիտի հասկա-
նայ, տես Միքայէլ Ասորի Դ, էջ 411. և էջ 504, Երուսաղէմ
1871. այլ և Մատթ. Ուոհայեցի Սարսաար և Սենեքերիմ, որ ա-
նունով և թագաւոր ունէին Վասպուրականում:

Այս տեսակ երևոյթները յատուկ են հեթանոսութեան և իբրև սովորութիւն, մանաւանդ թէ կրօնական կարգ երկար դարեր են տևում, երբեմն աւելի քան ինքը կրօնը, և դարեր յետոյ միայն փոփոխւում, մեղմանում, նուազում, մինչև որ չքանում է: Քրիստոնէութեան թուականից քիչ առաջ և յետոյ Հայոց թագաւոր Տիգրան վերջին Ոստանիկը կին էր առել իւր քոյր Երատօն¹. իսկ կէս դար յետոյ քրիստոնէական թուականի ա. դարի կէսին Հայոց թագաւոր Վրացի Միհրդատը կին էր առել իւր եղբօր Փարոմանի դուստրը, իսկ սոցա դուստր Ձենորիան իւր քեռի և հօրեղբօր որդի Հռազամիզդ-Երուանդի կինն էր ըստ Տակետոսի:



Այս ցանկից պարզ երևում է թէ դ. դարում քրիստոնեայ հայ ազատանին մերձամուսնութեան խնդրում շատ հեռու չէր գնացել առաջին դարուց. և հազիւ միայն Ե. դարում Շահապիվանի ժողովն արգելում է չորրորդ աստիճանի արեւակցական ամուսնութիւնը:

Ստեփան Կանայեանց

(Նարունակի)

1. Մենք ուրիշ տեղ ցոյց ենք տուել թէ ինչպէս Խորենացին, գուցէ և վէպը, շփոթել է Տրդատ-Արտաշէսի և Արտաշէսի ու Տիգրան Բ. Մեծի յաջորդներն իրար հետ շփոթել է (Ստեփան Կանայեանց, Անյայտ գաւառներ հին Հայաստանի, Դ, ա, էջ 50—52. Վաղարշապատ 1914): Այս Երատօն էլ կարծում ենք, որ Տիգրան Գ. վերջինի, ըստ Խորենացու Արտաշէս Բ.—ի որդի և յաջորդի, կինը Ռոփեն է: Տիգրանն իրօք Ոստանիկ տան վերջին թագաւորն էր. ուստի և Ռոփեան նախարարութիւնն էլ թուում է պէտք է կոչուէր Ռատոյեան. բայց այս մասին այլ ուրեք: